Տարեկան հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
/ՀԱԻ մասնաճյուղ/

2001թ. գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքների
հիմնական արդյունքների մասին

1. Հաշվետու տարում կենտրոնում պետական բյուջեից ֆինանսավորվել են 5 գիտական թեմաներ: Սրանց կատարման ուղղությամբ 2001թ. ձեռք են բերվել հետևյալ արդյունքները.

   ա. Իրականացվել են տարբեր բնույթի դաշտային հետազոտական աշխատանքներ՝ ազգագրական արշավներ Արթիկի, Անիի, Ախուրյանի, Աշոցքի տարածքներում, Գյումրի, Արթիկ, Մարալիկ քաղաքներում (ղեկ., ղեկ.՝Հ. Ափինյան, Կ.Սահակյան, Կ. Բազեյան), հավաքվել և մշակվել է բանահյուսական մեծաքանակ նյութ (ղեկ., ղեկ., Ս. Պետրոսյան, Կ. Սահակյան), հայտնաբերվել և քարտեզագրվել են նոր հնագիտական հուշարձաններ, կատարվել են հնագիտական արդյունավետ հետախուզություն մարզի մի շարք տարածքներում և պեղումներ Բենիամինի անտիկ դաստակերտում (ղեկ.՝ Հ. Խաչատրյան):

   բ. «Արհեստները ու տնայնագործությունը Շիրակում 20-րդ դարում» թեմայի (ղեկ.՝ ավ. գիտաշխատող Կ. Բազեյան) ուղղությամբ 2001թ. շարունակվել են դաշտային ազգագրական նյութի ինտենսիվ հավաքումը և մշակումը: Ավարտվելվել է Գյումրու թանգարաններում, Շիրակի մարզային և քաղաքային արխիվում, ԶԱԳՍ-ի բաժանմունքներում, Վիճակպետկոմում առկա բոլոր այն նյութերի ուսումնասիրությունը, որոնք առնչվում են թեմային: Կազմվել են մարզում տնայնագործության և արհեստների մասնագիտական քարտեզի և տեղեկատուի նախնական տարբերակները: Թեմայի գծով հաշվետու տարում հրատարակվել են 3 գիտական հոդվածներ և 4 զեկուցումների հիմնադրույթներ, պատրաստվել և ներկայացվել է հրապարակային պաշտպանության ՀԱԻ-ում մեկ թեկնածուական ատենախոսություն՝ « Հայոց ասեղնագործական մշակույթը»/Կ. Բազեյան/ թեմայով:

   գ. «Շիրակը և շրջակայքը մ.թ.ա. 1-ին հազարամյակում (բնակչության էթնիկական կազմը, առասպելաբանական պատկերացումները և պաշտամունքը)» ընթացիկ թեմայի (ղեկ.՝ կենտրոնի ավագ գիտաշխատող, պ.գ.դ. Ս. Պետրոսյան) ուղղությամբ հիմնականում ավարտվել է Շիրակի և շրջակայքի մ.թ.ա. 1-ին հազարամյակի պատմությանը, տեղանուններին և ցեղանուններին վերաբերող մատենագիտության կազմումը: Ճշտվել են սեպագիր (ուրարտական և ասորեստանյան) աղբյուրներում հիշատակված՝ Շիրակին և հարակից շրջաններին վերաբերող մի շարք տեղանունների տեղադրությունները, անտիկ աղբյուրներում հիշվող առանձին ցեղանունների համապատասխանությունը ուրարտական սեպագրություններում հիշատակված տեղանունների և վաղմիջնադարյան հայ մատենագիրների երկերում տեղ գտած դրանց համարժեքների հետ, ինչպես նաև՝ Շիրակում ջրային ոգիների պաշտամունքի հետ կապված՝ սեպագրային աղբյուրներում առկա մի քանի անուններ: Կազմվել է Շիրակին և հարակից շրջաններին վերաբերող՝ սեպագիր աղբյուրներում պահպանված տեղեկությունների համահավաքի նախնական տարբերակը: Ամբողջացվել են այս մասին հունահռոմեական աղբյուրներում պահպանված տեղեկությունների հավաքման աշխատանքները: Բացահայտվել են Շիրակի տարածքում մ.թ.ա. I հազարամյակի քաղաքական, պատմական, մշակութային զարգացումների և էթինկական

տեղաշարժերի մի շարք անհայտ դրվագներ: Թեմայի ուղղությամբ պաշտպանվել է մեկ դոկտորական ատենախոսություն «Դասերը և եռաադասության դրսևորումները հին Հայաստանում» վերնա-գրով/Ս.Պետրոսյան/, հրատարակվել են 5 գիտական հոդվածներ և զեկուցումների 3 հիմնադրույթներ:

դ. «Շիրակի անտիկ բնակավայրերը և դամբարանադաշտերը (մ.թ.ա. VI - մ.թ. IV դ.դ.) ընթացիկ թեմայի (ղեկ.՝ ավ. գիտաշխատող Հ. Խաչատրյան) ուղղությամբ շարունակվել են Լիոնի Արևելքի ուսումնասիրման գիտահետազոտական կենտրոնի հետ համատեղ INTAS ծրագրի շրջանակներում հնագիտական-հետազոտական աշխատանքները Շիրակում, Լոռիում և Տավուշում: Քարտավորվել, անձնագրավորվել և քարտեզագրվել են Աշոցքի Թավշուտ, Ենի-Յոլ Քարվանսարա բնակավայրերում անցյալ տարի հայտնաբերված վերին պալեոլիթի դարաշրջանի մի քանի հուշարձաններ, հետախուզվել են Հայկաձոր գյուղի մերձակայքում հայտաբերված քարայրները, հնագիտական պեղումներ են կատարվել Արթիկի Սարատակ գյուղի տարածքում հայտնաբերված երկաթի ժամանակաշրջանի դամաբարանում, ՀԱԻ և Բրետանի (Ֆրանսիա) հնագիտական ծառայության մասնագետների հետ համատեղ շարունակվել են Բենիամինի անտիկ դաստակերտի և դամբարանադաշտի պեղումները: Թեմայի գծով ՀԱԻ-ում հրապարակային պաշտպանության է ներկայացվել «Բենիամինի անտիկ դամբարանադաշտերը» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը /Լ.Եգանյան/, հրատարակել են 7 գիտական հոդվածներ, 3 զեկուցումների հիմնադրույթներ: Հրատարակության է նախապատրաստվել «Շիրակի նորահայտ հնագիտական հուշարձանները» եռալեզու տեղեկատու –կատալոգը՝ 8 տպագր. մամուլ ծավալով:

ե. «Շիրակի ժողովրդական և ժողովրդամասնագիտացված երգարվեստը 19-20դ.դ.» թեմայի (ղեկ.՝ ավ. գիտաշխատող Հ. Ափինյան) ուսումնասիրման աշխատանքները հաշվետու տարում ունեցել են ինչպես գիտահավաքչական, այնպես էլ վերլուծական ուղղվածություն: Կազմվել է պատմական ակնարկ Շիրակի երաժշտական մշակույթի հնագույն շրջանի վերաբերյալ՝ ըստ վաղմիջնադարյան աղբյուրների պարունակած տեղեկությունների: Ավարտվում է Շիրակի ժողովրդական երաժշտության հրատարակված նմուշների և ձայնագրված բնագրերի համահավաք մատենագիտությունը կազմելու աշխատանքը: Գյումրիում, Արթիկում, Մարալիկում և շրջակա 15 գյուղերում հաշվետու տարում ձայնագրվել են ժողովրդական երաժշտական ստեղծագործության շուրջ 500 նմուշներ, գրառվել և տեսագրվել են մարզի տարածքում ժողովրդական նվագարանների (թառ, դափ, պարկապզուկ և այլն) պատրաստման հին և ժամանակակից ձևեր, կատարվել են արխիվային աշխատանքներ պետական և մասնավոր հավաքածուներում պահվող ձայնագրությունների քարտագրման, Շիրակի աշուղների և կոմպոզիտորների կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող նյութերի հավաքման և այլ ուղղություններով: Թեմայի գծով տպագրվել են 3 գիտական հոդվածներ և 10 զեկուցումների հիմնադրույթներ:

զ. «Շիրակի ավանդական բանահյուսությունը, ծիսատոնական համակարգը և հոգեբանությունը հետաղետյան շրջանում» թեմայի (ղեկ.՝ կենտրոնի ավ. գիտաշխատող հ.գ.թ. Կ. Սահակյան) գծով շարունակվել է հետաղետյան ընտանեկան ծիսական բանահյուսություն ժանրերի՝հավատալիքների, սգո և թաղման արարողությունների, երազատեսության, կանխազգացումների մասին նյութի հավաքումը և մշակումը: Ավարտին է հասցվել հետաղետյան շրջանում ավանդական բանահյուսության և ծիսատոնական համակարգի կրած փոփոխությունների, էքստրեմալ պայմաններում ոչ լիարժեք, ինչպես նաև միգրացված ընտանիքների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Թեմայի շրջանակներում հրատարակվել են 3 գիտական հոդվածներ և 3 զեկուցումների հիմնադրույթներ:

2. --

3. ՇՀՀ կենտրոնում 2001թ. հրատարակվել է «Գիտական աշխատություններ» ժողովածուի III հատորը (ԳԱԱ «Գիտություն» հրատարկչություն, 16 հրատ մամուլ ծավալով) :

4. __

5.

ա) ---

բ) ---

գ) ---

դ) ---

6. ---

Աղյուսակ 1 --

Աղյուսակ 2 2001թ. ՀՀ ԳԱԱ կենտրոնի թեմատիկայի ամփոփ տվյալներ

Հիմնարկությունը	Պատբյուջեից ֆինանսավորվող թեմաների թիվը		Այլ աղբյուրներից ֆինանսավորվող թեմաների թիվը		
	կատարվել է	ավարտվել է	գրանտներ	տնտ. պայմա-նագրեր	այլ աղբյուրներ
1	2	3	4	5	6
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (ԳԱԱ ՀԱԻ մաս-նաճյուղ)		5	--------	-------	------

Աղյուսակ 3 --

Աղյուսակ 4 Հայաստանում ԳԱԱ գիտական կազմակերպությունների անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները և այլ գիտական միջոցառումներ

Հ.Հ.	Միջոցառումներ	Անցկացման վայրն ու ժամանակը,կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում արտ. երկրներից
1	2	3	4	5
1.	«Ղարագյոզի» թատրոնի ստեղծում թատերական ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի հետ համատեղ: Տեսաֆիլմ նվիրված վերոհիշյալ ազգագրական ավանդույթին :	Գյումրի, մարտ, ՇՀՀ կենտրոն, Գյումրու արվեստների ինստիտուտ	16	--
2.	Արտագնա գիտաժողով՝ նվիրված Անիի Մայր տաճարի հազարամյակին:	Ախուրյան գետի ափին՝ Անիի դիմաց, հունիս,ՇՀՀ կենտրոն,Գյումրու մանկավարժական և արվեստի ինստիտուտներ	12	---
3.	Սբ. Խաչի տոնակատարության կազմակերպում	Գյումրի, սեպտեմբեր, Շիրակի հոգևոր թեմի առաջնորդարանի հետ համատեղ		
4.	Հանրապետական գիտաժողով «Հոգևոր Շիրակ» վերնագրով՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության 1700 ամյակին	Գյումրի, հոկտեմբեր, ՇՀՀ կենտրոն, Շիրակի հոգևոր թեմի առաջնորդարան	14	---

Աղյուսակ 5 -
Աղյուսակ 6 -
Աղյուսակ 7 -

Աղյուսակ 8

Կենտրոնի 2001թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N	Հիմնարկությունը	Սենագրություն ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այն		Հոդվածներ, զեկուցումներ թեզիսներ և այլն	
		Հանր.	Արտ.	Հանր.	Արտ.	Հանր.	Արտ.
1	2	3	4	5	6	7	8
	ՇՀՀ կենտրոն	3	-	-	-	44	-

Աղյուսակ 9

Ասպիրանտների թվաքանակը

Հիմնարկություն	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1.01.2002 թ.		Հաշվետու տարում ասպի-րանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5
ՇՀՀ կենտրոն	1	4/2	- -	-

Աղյուսակ 10

Կենտրոնի աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ

N	Հիմնարկություն	Աշխատող-ների ընդհա-նուր թիվը (այդ թվում կանայք)	Գիտական աշխատողնե-րի ընդհանուր թիվը (այդ թվումկանայք)	ԳԱԱ ակադե-միկոսներ (այդ թվում կանայք)	Գիտության դոկտորներ (այդ թվում կանայք)	Գիտության թեկնածուներ (այդ թվում կանայք)
1	2	3	4	5	6	7
1	ՇՀՀ կենտրոն	20/11	15/9	- -	- -	5/1

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ